

ԲԱԺՆԵԳԻՆ

Տարեկան
100 Ղրուե
վեցամսեայ
50 Ղրուե

տոն. եւ Պատ. Տնօրէն
ԻՐԸՐ ԳՈՒՅՈՒՄՅԵԱՆ

Հասցէ
ԽՔՐՃԵԱՆ ԵՂԲԱՐՔ

Գրասենեակ
18 ՍԿՍՈՒՏԱԿԱՆ ՏՈՒՆ

Հասր 5 Ղրու.



ՊԱՏՐԱՍ

ARMENIAN

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՕՐԿԱՆ ՀԱՅ ՊՈՅ-ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒ. ԻԶՍԻՐ

BADRASD

Organe des Boy-Scouts Arméniens.
de SMYRNE

ΜΗΑΔΡΑΣΤ

ΟΡΓΑΝΟΝ ΤΩΝ ΑΡΜΕΝΙΩΝ ΠΡΟΣΚΟΠΩΝ
ΣΜΥΡΝΗΣ

ՆԵՐԿԱՅ ՄԱՆՈՒԿՆ Է ԱՊԱԳԱՅ ՄԱՐԴԸ

ABONNEMENT

Annuel

10 Frs.

Six-mensuel

5 Frs.

Direct. et Ger. Resp.
PETER COUYOUMDJIAN

Adresse
BAKIRGIAN FRÈRES

Bureaux
SCOUT-ROOM ARMEN.

Հասր 5 Ղրու.



Գ. Պոլսոյ Գաղութիւնի շրջանին Հայ սկաուտները, զետէն անցնելու համար
չուանէ կամուրջ պատրաստելու միջոցին:

Les Boy-Scouts Armeniens de Constantinople en train de passer la rivière.

The Boy-Scouts Association

25, Buckingham Palace Road

London S. W. 1

7 Յունվար 1922

Իզմիրի Հայ Պոյ-Սկաուտներուն,

Չափազանց սրախ եւ Ս. Ծնունդ

ի ձեր ջերմ մաղթանքները ստանա-

լու համար:

Սիրելի տղա՛ք, փարեցէք ձեր ըս-

տաւական օրէնքին և 1922-ը պիտի

ըլլայ — ինչ որ կը մաղթեմ անկեղծօ-

րէն — երջանիկ և բարեբաւորի տա-

րի մը ձեզ համար:

Աշխարհի Ընդհ. Սկաուտ-Պէս

Robert Baden Powell

Les Exploradores de Espana. Madrid

Մարտի 4 Յունվար 1922

Իզմիրի Հայ Պոյ-Սկաուտներուն,

Ազնիւ ընկերներ,

Եստ անկեղծ գոհունակութեամբ

մը տոնիքը ունեցայ ընդունելու ձեր

շնորհաւորութիւնները: Ես, յանուն

բոլոր Սպանիացի սկաուտներուն փո-

խադարձաբար կ'աղարկեմ ձեզ ամե-

նաջիրմ եղբայրակցութեան մը ար-

տայալտութիւնը և մեր սրտազին մաղ-

թանքները բարեբաւորիկ Նոր Տարւոյ

մը համար:

Վստահ պէտք էք ըլլալ թէ Սպան-

իացի սկաուտները ամենամեծ շահա-

խնդրութեամբ է որ կը հետեւին ի-

րենց սիրելի հայրենիքին մեծութեա-

նը ու փառքին համար կոռուղ հայ

եղբայրներուն գոհողութեանց և մեր
զգացումները ուրիշ բան չեն եթէ ոչ
ամէնաջերմ համակրութիւն մը ձեր
ազգային խաչաշնորհուն հանդէպ, ու
րոնց առջև խոնարհելով կը մաղթենք
ձեզ յաջողութիւն:

Հաճոյքը կ'ունենամ ա՛յս առթիւ
ձեզմէ խնդրելու որ ընդունիք ընկե-
րային անկեղծութեան մը հաւատարմը:

Սպանիոյ սկաուտներու Ընդհ. Պէս

Juan Antonio Dinas

ՍԿԱՈՒՏ ՄԸ ԲԱՐԵԿԱՍՆ Է ԱՄԷՆՈՒՆ

Սկաուտ, յիշէ՛ որ եղբայրն ես ու
րիշ ամէն սկաուտի:

Տես, քու պաշտած Յիսուսը իբր
մարդկութեան ծառայ մը՝ ինչպիսի
խոնարհ ոգևով մը իր տառներկու ա-
ռաքեալներուն ոտքերը լուսաց, ցոյց
տալու համար մեզ թէ մարդկային ա-
մէն անդամ պարտաւոր է օգնել իր
նմանին, առանց դոյզն ինչ հպար-
տութեան զգացումի մը:

Բարի գործ մ'ընելու մտածումը
կամ գաղափարը կը բաւէ արդէն մը-
ղելու քեզ դէպի այդ պարտականու-
թիւնը և հոգեկան բոլոր եռանդովդ
կ'ստիպուիս անպատճառ կատարել
զայն ու անպուգական երջանկութիւն
մը զգալ:

Եւ թէ միթէ կարող է ապրիլ այդ
երջանիկ վայրկեանները եթէ ոչ մի-
այն այն ճշմարիտ սկաուտ պատանին
որ իրական սկաուտիզմը ըմբռնած՝ կը
հետեւի բոլոր օրէնքներուն և որ քա-
րեկամն է ամենուն եւ եղբայրը ուրիշ
ամեն սկաուտի:

ՎԱԳՐ

«Պատրաստ» կը ծախուի
(Զարթոնք) Գրասունք:

Մ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Բաւական երկար տտեմէ ի վեր սպասուած Միութիւնը՝ Պոլսոյ և Իզմիրի սկառաւական կազմակերպութեանց միջև այսօր կատարուած իրողութիւն մ'է։ Անշուշտ թէ չէինք կրնար անտարբեր անցնիլ այս բարեբաւտիկ երևոյթին վերայէն, ու կանգ չառնել ամիջապէս ու պարզել սկառաւական սկզբունքը ուր պիտի տեսնենք որ շատ օրինակաւ և նոյնիսկ պարտադրուած բնական պահանջք մ'էր այն։

Արդարև, եթէ չըլլայ սերտ կապը բոլոր Հայ սկառաւներուն մէջ, ինչպէ՞ս կարելի պիտի ըլլայ օտար սկառաւներու հետ ստեղծել ընդհ. միութիւնը՝ զոր իբրև բացարձակ նպատակ ունի այն շարժումը որ կը կոչուի սկառաւիզմ և որուն նուիրումն է իր յոյժ համեստ կարողութեամբը «պատրաստ»։ Չենք ուզեր մեր նախորդ ըսածները հոս կրկնել, պարզ գիտակցութիւնը, և տրամաբանութիւնը պիտի մղէր զմեզ ընդառաջ երթալու, ստեղծելու համար իսկական Հայ սկառաւիզմը, առանց ասոր անիկա՝ անիմաստ պիտի մնար, և շարժումը ինքն իր մէջ՝ իր առաջին քայլին իսկ թերի։

Իզմիրի և Պոլսոյ միացումով կարելի է ըսել որ բոլոր Հայ սկառաւները միացած կ'ըլլան, նկատելով որ Պոլիս արդէն սերտ կապ մը հաստատած է այլ տեղերու բոլոր Հայ սկառաւներուն հետ։

Առանց գործածելու այս գեղեցիկ Միութեան շուրջ մեծ մեծ բառեր՝ կ'ողջունենք զայն, և կը յուսանք՝ ինչպէս մեր ընկերներէն ոմանք արտայայտուեցան, յառաջիկային կարելի պիտի ըլլայ, ամբողջ Հայ սկառաւներու կարգերուն ու սովորութիւններուն մէջ նոյնութիւն մը գնիլ, և առաջին առթիւ իսկ օտար տեղոյ մը մէջ որպէս Հայ սկառաւ գիրար անմիջապէս ճանչնալ և իրարու հասկնալի ըլլալ։

Միութիւնը ունի նշանակելի առաւելութիւն մ'էս, ունենալով որոշ կեդրոն մը՝ որ միացուցած պիտի ըլլայ բոլոր Հայ սկառաւներուն ձայնը իրենին, պիտի կարենայ անտարակոյս յանուն ամբողջիս՝ խօսիլ և իբրև այդ պաշտօնապէս ճանչցուիլ յաջ օտարներու։

Մեր ներկայ թիւով հրատարակած հեռագիրը՝ Բարիքի մէջ գումարելի ըսկառաւական Միջազգային Համաժողովի մասին շատ խօսուէն է, զայն լուրջ ու շարժութեանը կը յանձնենք Պոլսոյ մեր կեդրոնին, և կը փափաքինք որ անպատճառ Հայերը մասնակցին և ունենան իրենց ձայնը և ուրոյն տեղը։

Ճշմարիտ սկառաւագիր պէտք է տարածուի, առ այս յառաջացած Միութիւնը գնահատելի է, և որուն բարեբաւ արգիւնքին համոզումը ունինք մենք։

ՄԵՐ ՅԱՐԳԱՆՔԸ

ԴԷՊԻ ԱԶԳԱՅԻՆ ԴՐՕՇԱԿԸ

(Պատշաճորիչ հրահանգներ
Հայ սկառաւներուն)

1— Դրօշակը պէտք է ծածանել արեւածագէն առաջ, և մայրամուտէն վերջ։

2— Երեկոյեան մայրամուտին, երբ դրօշակը վար կ'առնուի պէտք է յարգանքով ոտքի կանգնիլ ու բարեկել։

3— Երբ ազգային դրօշակը գինուորական կամ քաղաքային ունէ գընացնով կ'անցնի, հանգիստականները պէտք են անմիջապէս կենալ եթէ կը քալեն, կամ ոտքի կանգնիլ եթէ նստած են և գլխարկնին հանեն։

4— Յուզարկաւորութեան մը պահուն երբ դրօշակը ձողին կէսին վը-

րայ կը ծածանի, արարողութիւնէն վերջ դրօշակը նախ ձողին գազաթը պէտք է բարձրացնել և յետոյ իջեցնել։

5— Երբ դրօշակը որևէ յուշարձանի իբր քօղ կը գործածուի պէտք է զայն գետինը ձգել յուշարձանին բացումէն վերջ, այլ պէտք է ծածանել այնպիսի ձևով մը որ նայն հանդէսին գլխաւոր մէկ պատկերը ներկայացնէ։

6— Սուրբ Գրքէն զատ որևէ առարկայ պէտք է գրուի և կամ ծանրանայ դրօշակին վրայ։

7— Երբ ազգային դրօշակին հետ տարբեր դրօշակներ ալ պիտի ցուցադրուին ձողերու վրայ, նախապէս ազգային դրօշակը պէտք է բարձրացնել ամենաբարձր և ամենաաջքառու ձողին վրայ։ Երբ երկու դրօշակներ պիտի ծածանին նոյն ձողին վրայ աջակողմը պէտք է ծածանի Ազգային Դրօշակը։

ԴԷՊԻ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՅԼԵՐԳԸ

Ազգային Գայլերգը հնչուելու պահուն պէտք է՝

1— Անմիջապէս ոտքի կանգնիլ և մնալ անշարժ՝ մինչև քայլերգի վերջանալը։

2— Պէտք է գլխարկնիրը հանել և ձախ ձեռքով կուրծքին վրայ պահել։

3— Պէտք է խօսիլ, ծխել, քալել և կամ ունէ չըսել հանել։

4— Ձեռքերը պէտք է գրգռնին մէջ պահել։

5— Պէտք է հպարտ կեցումը մը ունենալ քայլերգի ամբողջ տեղութեան։

Մ. ԵԱՆԸԳԵԱՆ

ՍԿԱՌԱՏԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ

Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ

Հայ սկառաւագիր ցարդ ունեցած իր բարոյական յաջողութիւններուն հետ ունի նաև չափազանց զգալի պահանքներ որոնց ամենակարևորն է Հայ սկառաւական կատարեալ ու ամբողջական դասընթացքի մը չգոյութիւնը։

Մեծ հրճուանքով մը կը յայտնենք թէ մեր անխնայ ու համակրելի Ընդհ. Պետը վաղուց զգացած ըլլալով այս ստիպողական պակասը լոկի միջի գործի սկսած՝ ու ձեռնարկած էր ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԿԱՌԱՏՆԵՐՈՒ յաջող դասագրքի մը պատրաստութեան որ պիտի պարունակէ նորեկի, Երկրորդ կարգի և Առաջին կարգի ամբողջական դասախօսութիւնները սկառաւական կատարեալ տեղեկութիւններով։ Արդէն ձեռագիրը մօտ տասնէն պատրաստուելով տպագրութեան պիտի յանձնուի։

Պր. Եանըգեանի այս ազգօգուտ գործը ոչ միայն մեր այլ աշխարհի վրայ ապրող ու գործող բոլոր Հայ ըսկառաւներուն ու զեկավարներուն երախտագրութեան արժանի է։

— Անցեալ շաբաթ Պոլիս մեկնեցաւ Հ. Մ. Ը. Մ. ի լիազօր Պատուիրակ Պր. Թ. Մեծատուրեան որ իր հետ կը տանի երկու կողմերու կողմէ ստորագրուած միութեան բանաձևը ինչպէս նաև կարգ մը քեֆնիֆական ու կազմակերպական առաջարկներ և ուսումնասիրութիւններ։

Իրեն ողջերթի գացած էին իզմիրի բոլոր բանակներէն կազմուած պատերազմութիւն մը։

Հայ ազնա's, եթէ կ'ուզես որ գաւազդ ուղղամիտ քաղաքացի մ'ըլլայ, քաջալերէ՛ «Պատրաստ»ը։

ՀԱՅ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

Կ. ՊՈԼՍՈՑ ՄԷՋ

Կ. Պոլսոյ մէջ սկաուտական գոր-
ունեութիւնը հետզհետէ կը բազմո-
ւորուի։ Զ. Մ. Ը. Մ. ի կեդր. վար-
չութիւնը ու բոլոր պատասխանատու
արմիները ընթերցեն կ'աշխատին Հայ
սկաուտիկները իր կատարելութեան հաս-
նալի։ Գալով սկաուտական մասնա-
կիւղերուն, անոնք ալ իրենց կարե-
ւն կ'ընեն շարժումը ու խանդավա-
րութիւնը միշտ բարձր պահելու։

Անցեալ Կիրակի Զ. Մ. Ը. Մ. ի
Վրա-Շիշլիի սկաուտական մասնա-
կիւղին կողմէ կազմակերպուած հան-
գիստ մեծ յաջողութիւն ձեռք բերաւ։
որ հրաւիրեալներու խումբն բազմու-
թիւն մը ներկայ էր քաջալերելու հա-
մար այդ պատանի սկաուտները որոնք
պագայ ազնիւ եւ ուղղամիտ սերուն-
դ պիտի կազմեն։

Պր. Յ. Հինթլեան բանախօսու-
նան մը միջոցին հրաւիրեց հայ ծը-
նկները իրենց զաւակները յանձնել
այ սկաուտական կազմակերպութեան
որ զանոնք պիտի վերագործնէ ա-
նող, քաջ, ազնիւ եւ ուղղամիտ։
Քիչ ունեցան արտասանութիւններ,
ննդանի պատկերներ եւ կատակերգու-
թիւններ որոնցմէ վերջ ժողովրդային
ննջարեւր նուիրատուութենէ մը 100
պիլի չափ հասոյթ մը գոյացաւ։

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՄԷՋ

ԱՆՊԱՆՈՒՄ ՄԷՋ

Հաւանդ.— Հաւանդի սկաուտները
կրնին երաշտութեան ժամանակ դոյ-
նալ ջուր փոխադրեցին խեղճ ժողո-
ւորին։ Դեկտ. Յին, մեծ պարա-
նդէս մը կազմակերպեցին որուն
ուր հասոյթը յատկացուեցաւ պա-
տեարզմի դաշտին վրայ ինկած զին-
ւորներու ընտանեաց։

Ուեսթ-Համ.— Ուեսթ-Համի սկա-
ուտական 12 բանակները իրենց 12րդ
արիւղարձը տօնելու տաթիւ մեծ ցու-
նահանգէ մը կազմակերպեցին։ Նիւ-
թիլան հասոյթը ու բարոյական յաջո-
թիւնը խիստ զոհացուցիչ են։

Թօլուօրթ.— Թօլուօրթի սկաուտ-
ները ժողովուրդին հանգէպ իրենց
բարականութիւնները կրկնապատ-
կու համար կազմեցին նախնական
արմանի, հրշեջ եւ զիշերապահներու
արմեր։ Այս առթիւ Թօլուօրթի հա-
մարկութիւնը գնահատելով անոնց
բարոյութիւնը գործունէութիւնը նիւթա-
նայն օժանդակութիւն մը կ'ըն-
այն անոնց։

ԱՆՊԱՆՈՒՄ ՄԷՋ

Սկաուտական շարժումը Ալպանիոյ
մէջ առաջին անգամ մուտք գործեց
1920ին երբ Անգլիացի օրիորդ մը
Miss Marguerite Moseley Williams,
իր անձնական պատասխանատուու-
թեան ներքեւ Թիւրանօի մէջ Ալպանա-
ցի պատանիներէ սկաուտական խումբ
մը կազմեց։

Օր. Մօսթրէյ Ուիլիամսի ձեռնարկ-
ները կատարելապէս յաջողեցան։ Ալ-
պանիոյ ամբողջ ժողովուրդը մեծ խան-
դավառութեամբ ընդառաջ գնաց այդ
շարժման։

Ալպանիոյ թէւ փոքր աղքատ եր-
կիր մըն է, սակայն այն ժրաջան գոր-
ծունէութիւնն ու կորովը որ կը
տիրէ ներկայ պատանեկութեան եւ
երիտասարդութեան մէջ յոյս կը ներ-
շնչեն թէ սկաուտիկները պիտի ապրի
այս ժողովուրդին մէջ։

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Սկաուտական Միջազգային Համա-
ժողովը տեղի պիտի ունենայ Բարիդի
մէջ 22էն 30 Յուլիսին։ Հաւանական
է որ վարչական նիստերուն մասնակ-
ցին նաեւ փափաքող պիտեղը, մինչ
մասնագիտական նիստերը վերապահ-
ուած են միայն պաշտօնական պատ-
ուիրակներուն։

Համաժողովին ամբողջ տեսչու-
թեան Միջազգային գրասենեակը պի-
տի գործէ Բարիդի մէջ, Յատուկ մաս-
նագէտներ նշանակուած են քեֆնիա-
կան, կազմակերպական, դասախօսա-
կան եւ այլն խնդիրներու շուրջ կա-
տարուելիք հարցումներուն պատաս-
խանելու համար։

ՆԱԽՆԱԿԱՆ ԽՆԱՄԲ

ԹՈՒՆԱՆՈՐՈՒՄ

Նշան.— 1. ասիտներով, ֆիւիական աղծ-
րով եւ կամ բունաւոր նիւթերով։— Փսիսուս,
ստամոքսի խնդարում եւ խիւ, տօգունու-
թիւն, սարսուռ, փորճարութիւն։

2.— Նարգօտիկով։ Բնանալու հակում, ջա-
լով եւ շնչանդմով։

3.— Թունաւոր կազերով շնչանդմով։

Դարման.— Անմիջապէս թփշկ կանցել։
1. Փախել սալ, մաքր իր կոկորդիկն մէջ
մխրձելով, Գօթի լեզուն խօսել։ Խոհանոցի
աղի յաղտորութիւն մը կամ ուրիշ փախիչ
ղեղ մը պատահել։

2. Թոյնը յեղհացնելու համար հակա-
թոյն մը (contre poison) խմել։

Ա.— Անքններու դեմ— Կրպուր, օժառի
շուր, պիքար պօնաձ աղ սուտ։

Բ.— Կազերու դեմ— Բացխային ջուր, յի-
մնիկ խմել։

3.— Եթէ ինքնաշուն հակում ցոյց կուտայ,
արտաքին շնչառութիւն։

4.— Եթէ կը զառանցէ, եւ կը խոռոչուի,
զովորքիւն իր գլխուն վրայ, եւ կամ օտ լո-
գաթի։

Թոյներու դէմ. 1.— Ընդհանրապէս առա-
կաք, հակիքի ձեւակոյց, ձիւթիւղ։

2.— Մասնաւորապէս, սեւ խանութի մէջ
յեմնի ֆուլ, եթէր եւայն։

Պօյ-Սկաուտ

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԿԻՏԵԼԻՔ

Առարկայ մը կրակին դեմ պաշտպանելու
համար պիտի հետեւեալ դիւրին միջոցին
դիմել։ Իրարու մէջ յուծել 600 աղ, 1200
պօրաք եւ 820 ջուր։ Սոյն մարմնին մէջ
մխրձել ուղղաւ առարկան, եւ հանելի վերջ
կախել յորհալու համար. այսպէս կրակին չի
վնասուիր ա յեւս։

— Գիշերը երբ ցուրտ կ'զգաք, խմել մը
յրաջիւր տաքացնել ծածկոցին եւ ձեւակե-
ղեկին միջեւ, այսպէսով տաքացնել յրաջիւ-
րները հանելի օտարութիւն մը պիտի տան։

ԲԻԹ

ՎՐԻՊԱԿ

Ընդհանրական նախադրութիւններ
բառատարական յարգելի Պր. Զ. Մ. ի
ՀԱՅ ՍԿԱՌԻՏԸ վերնագրով յօդուածին
20րդ տպին մէջ «անմահ» բառը կար-
գալ «ուսման»։

ՎԱՀՐԱՄ ԳՊՐԶԼԵԱՆ

Բառաժ Գույումեան քիւ 38

(Ֆրանկաց Թաղ)



Կը պատրաստէ նուրբ եւ յստակ փո-
րագրութիւններ, վաճառականական
կնիքներ, քիւշէներ, անսէնեաներ, մօ-
նօկրամներ եւ այլն։

Կը պատրաստէ ամէն կերպ ուկեղէն եւ
արծաթեղէն գործեր, նուրբ եւ ճաշա-
կաւոր։

Վաճառատան մէջ կը գտնուին նա-
եւ ֆրիսքալ ակնոցներ այլազան տե-
նակներով, ֆիւլիկ պլու եւ այլն։

Ապսպրանքներ՝ խնամեալ

Գիտեր՝ խիստ աժաճ



ՄԱՐԶԱՇԻԱՐԶ

Առողջ միտք՝ առողջ մարմնի մէջ



ՖՈՒԹԳՈԼԸ ՄԵՐ ՄԷՋ

Առջի կիրակի 22 Յունվար, կէսօրէ վերջ, ժամը ճիշդ 3.15ին Արօլլոնի դաշտին մէջ, ամէնագոյի խումբն իրարմէջ հանդիպելու համար խաղացան:

Սոյն մրցումը վերջացաւ 1ի դէմ 1 կոչով, որով ներկա խումբերն ալ մէկ մէկ ինչ շահեցան:

Անցեալ կիրակի 29 Յունվար Բանիօնի դաշտին մէջ կէսօրէն վերջ ժամը 3ին տեղի պիտի ունենար «Արօլլոն» գաւաթի տաղի մասի վերջին մրցումը ընդմէջ Հայկական և Բանիօնի խումբերուն:

Սակայն տեղացոյ յորդաւառ անձրեւին պատճառաւ կեդրոնական գոմիթէի ներկայութեան ու իրաւարարին սրտումով մրցումը յետաձգուեցաւ: Հակառակ խիստ աննպաստ օդին, հետաքրքրանքով ստուար բազմութիւն մը գումար էր դաշտ, գիտելու համար այս կարեւոր մրցումը:

Հ. Ա. Մ. Ճ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Հայ Ակումբի Մարմն. Ճիւղի Վարչութիւնը նկատելով որ ազգային սեփական դաշտ մը ունենալու պարագային կարելի է շատ աւելի կատարելագոյն մարզութեամբ ֆութպօլի խաղացողներ ունենալ ու այսպէս նախկիններէն փայլուն նորանոր յաղթանակներ շահիլ, և փոխան ըլլալով որ հայ հասարակութիւնը ինչպէս ցարգմեծ համակրութեամբ հետեւած է ֆութպօլի խումբին մարտամիներուն նոյնպէս ասիէ վերջ ալ պիտի շարունակէ բարոյապէս ու նիւթապէս օգնել կանգնել անոր, որոշած է մրցումներու հասոյթներէն ու անդամներու ամսագրներէն գոյացած հասոյթին մեծ մասը տեղաւորել Օսմանիան դրամատան մէջ որպէսզի կարելի ըլլայ հաւաքուած գումարով մօտ 10 տնէն դաշտ մը վարձել կամ պնել:

Այս առթիւ Վարչութիւնը 50 ասկի գումար մը պիտի տեղաւորէ իբր Նախաքաջ:

ՖՈՒԹԳՈԼԻՍՏԻՆ ՍԻՆԱԿԸ

Հ. — (Հայկ) Որ պարագային կարելի է հօշիւ բռնի չարմ տու:

Պ. — Մի միայն երբ գնդակը բռնած է. ուրիշ ռեւէ պարագայի չարմ օտար ֆաուլ կը նկատուի:

Հ. — (Գ. Յ.) Հայկական խումբին ամենատարկողը ո՞րն է:

Պ. — Ֆորուորներու գիծը ճակատագրականօրէն ամեն օտար եղած է. զէր խումբերուն չկար մասը:

Հ. — (Հաւեն) Անծիրը միթէ արգելք է պաշտօնական մրցման:

Պ. — Ո՛ր:

Հ. — (Հաւեն) Ո՞վ է իրաւասու եւ ի՞նչ պարագաներու ներքեւ կրնայ մրցում մը յետաձգուիլ:

Պ. — Մի միայն իրաւասուն է իրաւասուն յետաձգելու պաշտօնական մրցում մը 1) խաղալային անյարմարութեան, 2) հանդիսականներու միջամտութեան, 3) օդին խաղաղաց աննպաստութեան պատճառներով:

Հ. — (Յարութիւն) Մրցման մը պահուն խաղացողներէն մին ծանրապէս կը վիրաւորուի, կարելի՞ է ուրիշ մը փոխանորդել:

Պ. — Ո՛ր:

Հ. — (Սարգիս) Ի՞նչ է քննչի լարածութիւն եւ ի՞նչ քանի կը ծառայէ:

Պ. — Բէնըմիթի օտարութիւն կ'ըստի այն շրջապակին՝ որ կը գտնուի կօլի կեդրոնէն 18 եւսրա հեռու՝ եւ կօլի իւրաքանչիւր ճողկէ 18 եւսրա զուգահեռ՝ երկու գծերով իրարու միացնող օտարութեան մէջ: Այս օտարութեան մէջ երեք հեռեւեալ յանգանակներէն ռեւէ մին գործուի բէնըմիթի քիթ կը շնորհուի: — 1) Ոտք դրնել, 2) կից օտար, 3) ցատկ, 4) ձեռքով բռնել 5) ձեռքով դպչիլ գնդակին, 6) զարնել հակառակորդի մը, 7) չարմ օտար վտանգաւոր ձեռքով, 8) չարմ օտար ետեւէն եւ 9) հրէք հակառակորդ մը:

Հ. — (Վ. Գ.) Օրէնքներու հմտութիւնը ի՞նչ օգուտ ունի խաղացողի մը:

Պ. — Առանց օրէնքներու հմտութեան խաղացողները դասապարտուած են անդադար փախչել գործելու: Իսկ կազմակերպական գործի համար օրէնք գիտելը անհրաժեշտութիւն մ'է:

Հ. — (Անահիտ) Աղջիկներու համար ֆութպօլ խաղալ կը յանարարէ՞ք:

Պ. — Ո՛ր, ֆութպօլը մարմնի մկանները ու շիղերը առնելի պոկումի կ'ենթարկէ, իսկ գեղեցիկ սեռին կազմը այդ ճնշումին անկարող է դիմադրել: Ֆութպօլը մոյն իսկ վնասակար է հիւանդակալ ստացող համար:

Մ Ր Ց Ո Ւ Մ

Այոք, 5 Փետրվար, կէսօրէ վերջ ժամը ճիշդ 3ին, Բանիօնի դաշտը տեղի պիտի ունենայ անցեալ կիրակիի յետաձգուած մրցումը ընդմէջ Հայկական և Բանիօնի խումբերուն:

ՀԱՅ ՖՈՒԹԳՈԼԻՍՏՆԵՐԸ

Մարմնակրթանքի կարեւորութիւնը առաջին անգամ գնահատած է Հայկական Ժողովուրդը և սարքած է զինպիական մրցումներ. նպատակ ունենալով մարզուն մէջ զարգացնել առնական կորովը, մկաններ քնքերով տալ ուժեղ զարգացում, չիզիրը ակրապնդել, ոսկրային դրութիւնը անցնել ու այսպէս մարդկային էակը պատաստել կեանքի պայքարին համար:

Հին Հայաստանի ժողովրդեան կեանքին մէջ ալ կը նշմարուին մարմնակրթական խաղեր, որոնցմէ հետագումներ, գաղանամարտութիւններ, որոնք խօսուած ապացոյցներ են որ մենախնդրները այնքան սերտօրէն փախած են մարդկան խաղերուն և խաղէս Սինկայի խօսքը հասարակ ճամբարութիւն մը դարձած է. «Առողջ միտք՝ առողջ մարմնի մէջ»:

Իսկ մենք այսօր տեղաւոր մէջ ունինք Ֆութպօլի Հայ պատկառելի խումբ մը որ այնքան փառաստուր թանկաներէ վերջ, մեզ այն յայտը ներշնչէ թէ ազգային ալ պիտի կրնանք նոր ու փառաստուր դասակարգ սակներ խլիլ ի պատիւ մեր Ազգին: Ու ո՞վ գիտէ, եթէ այդ քաջ խումբը օժտուեք ազգային սեփական դաշտով մը, Յարէթեաններ, Կր. Կենտ. ներ, Տէպեթեաններ, Ծահրեաններ Միասնականներ և այլն, ի՞նչպիսի փառաստուր յաղթանակներով պիտի պատկառելի Հայ մարմնակրթանքը:

ՃՕՆ Գ. ՓԱՓԱՋՆԻ

ՄԵՐՈՒՆ՝ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՄԷՋ

ԳԱՐԲԱՆԹԻԷ ՅԱՆԹԱԿԱՆ

(Սեփական հեռագիր)

ԼՕՆՏՈՆ, 13 Յունվար. — Գարբանթի յաղթական 4րդ բառնէին:

Անցեալ Հինգշաբթի, 12 Յունվար ԼՕՆՏՈՆԻ Արպեր Հօլի մէջ տեղի ունեցաւ պօքսի մեծ մրցումը Եւրոպայի ախոյեան Գարբանթիի և Աւստրալիոյ ախոյեան Գուլի միջև:

Այս վերջինս յաւատ ու վայրեն զիմադրութիւն մը ցոյց տուաւ միջ Գարբանթիի իր ճարպիկ ու քիֆիկական դարձուածքներով ու հարուածներով կարողացաւ 4րդ բառնէին գգնել նախաւորողը:

Մրցումը տեղի ունեցաւ 13 վայրկեան:

Նիւթերու առատութեան պատճառաւ տեղի ունեցանք յառաջիկայ թիւով հրատարակելու մեր թերթին շարունակութիւնը:

ՏԳԱԳ. ԿԱՇԵՆՅԱՆ